ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ապրիլի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեսակցելու և շուտափույթ ապաքինման ու առողջության Իր բարեմաղթանքներն անձնապես փոխանցելու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը:

Հաջորդ օրը. ապրիլի 15-ին, Նորին Սրբությունը, ընկերակցությամբ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ընդունվեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի կողմից:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայաստանի ներկա կացությանը վերաբերող խնդիրներ:

Ապրիլի 17-ին Արամ Ա Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողության հետ՝ բաշխելով իր օրհնությունները:

Նույն օրը, երեկոյան, Նորին Սրբությունը մեկնեց Լիբանան՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության նստավայր: